

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի 26/03/2019թ թիվ 12-Լ որոշմամբ
Փոփոխված է

28/04/2020թ թիվ 11-Լ որոշմամբ

29/09/2020թ թիվ 35-Լ որոշմամբ

29/01/2021թ թիվ 2-Լ որոշմամբ

24/02/2021թ թիվ 9-Լ որոշմամբ

24/02/2021թ թիվ 9-Լ որոշմամբ

--/--/2021թ թիվ ---Լ որոշմամբ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
«» -----ի 2021թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան


ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՆԴԱՄ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ)

Հոսքագիր 1-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ

Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)

1	Պայման 1	3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՊԱ-ի կողմից տրված էլեկտրոնային համաձայնություն կամ արձագանքի բացակայություն, որը հավասարեցվում է ՀՊԱ-ի համաձայնությանը:
2	Պայման 2	3 աշխատանքային օրվա ընթացքում որպես ՀՊԱ ծանուցված Ապահովագրողի կողմից տրված էլեկտրոնային անհամաձայնություն՝ սույն հավելվածի 2.1-րդ կետով նախատեսված համապատասխան կետի նշմամբ:
2.1		Պայման 2-ով նախատեսված՝ փոխհաշվարկի հետ կապված պահանջին վերաբերող անհամաձայնությունը որպես ՀՊԱ ծանուցված Ապահովագրողի կողմից կարող է տրվել միայն, եթե ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված գործընթացների շրջանակներում՝ ա. ԴՍԱ-ի կողմից ծանուցված ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշման փաթեթն ամբողջական չէ՝ ըստ ԱՊՊԱ ընդհանուր պայմանների պահանջների, բ. որպես ՀՊԱ ծանուցում ստացած Ապահովագրողը ՀՊԱ չէ, գ. ԴՍԱ-ի կողմից ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշմամբ նախատեսված ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված ապահովագրական գումարը, դ" ԴՍԱ-ի կողմից նշանակված լրացուցիչ փորձաքննությունն իրականացվել է ԱՊՊԱ ընդհանուր պայմանների դրույթների խախտումներով, ե. առկա են ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված հիմքեր հատուցում վճարելու վերաբերյալ դիմումը մերժելու կամ հատուցման գումարը նվազեցնելու համար, զ. տուժողին պատճառված վնասը հնարավոր է հստակ տարանջատել ըստ մի քանի վնաս պատճառողների, սակայն ԴՍԱ-ի կողմից նշանակված փորձաքննությամբ փորձագետը գնահատման եզրակացությամբ այդ հարցին չի անդրադարձել (բացակայում են փորձագետի գրավոր հիմնավորումները), է. պատահարում առկա է այլ ՀՊԱ, որին ներկայացված չէ փոխհաշվարկի հետ կապված պահանջ, ը. ՊԿԱ-ն ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով ծանուցված չի եղել պատահարի մասին, ընդ որում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի գծով առկա է այլ ՊԿԱ, որը ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով եղել է ծանուցված պատահարի մասին: <u>թ. ԴՍԱ-ի կողմից ԱՄՄՊ համակարգ մուտքագրված ելակետային տվյալները չեն համապատասխանում համապատասխան փաստաթղթերում ամրագրված ելակետային տվյալներին:</u>

3	Պայման 3	ՀՊԱ-ն համաձայն չէ ԴՍԱ-ի կողմից ներկայացված պարզաբանումներին կամ իրականացված ճշգրտումներին և իր անհամաձայնության մասին տեղեկացրել է ԴՍԱ-ին և Բյուրոյին 3 աշխատանքային օրվա ընթացքում:
4	Փոխհաշվարկում ներառվում է սույն կանոնների 4-րդ կետով նախատեսված ամսվա փոխհաշվարկներում:	
Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ		
	Գործողություն	
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)	
	Պատասխանատու	
	Պայման	
	Պարտադիր գործողություն	
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը	
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո:		
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:		